ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս երկրորդ պրակն է մեր «Նիւթեր եւ Ուսումնասիրութիւններ» աշխատութեանց շարքին, որ նախապէս տպագրուած է առանձին յօդուածներով «Հայաստանեայց Եկեղեցի» պարբերականի մէջ:

Այսպիսի պրակներով, ինչպէս բացատրեցինք Ա. պրակի յառաջաբանի մէջ, մեր նպատակն է մի կողմից բանասէրներին դիւրութիւն ընծայել առանց երկար որոնումների ձեռքի տակ ունենալ գրքոյկով, եւ միւս կողմից դիւրացնել հեղինակի գործը ամբողջական աշխատանք գրելու ժամանակ, որ յուսանք, թէ մի օր պիտի յաջողուի մեզ կատարել:

Պրակների նիւթերը իրար հետ անմիջական կապ չունին, այլ իբրեւ առօրեայ եւ առանձին խնդիրների հետ կապուած ուսումնասիրութիւններ են, որոնք սակայն լուսաբանում են Հայ արուեստի եւ մշակոյթի որոշ հարցեր կամ շրջաններ:

«Կոստանդին Ա. Կաթուղիկոս» վերնագրով աշխատութեան մէջ յանախ յիշւում է Թորոս Ռոսլինի գրած եւ նկարազարդած 1253 թուի Աւետարանը, որպէս սեպհականութիւն Վաշինգտոնի Freer Galery of Art-ի (եր. 20 եւ շար.): Գործի տպագրութիւնից յետոյ միայն պարզուեցաւ, որ մասնաւոր սեպհականութիւն է եւ այնտեղ բերուած է եղել վաճառելու համար: Ինչպէս յիշել ենք ուսումնասիրութեան մէջ, այդ Աւետարանը մենք տեսել ենք, լուսանկարել հարկաւոր մասերով եւ յիշատակարանները արտագրել 1911 թուին եւ երկրորդ անգամ 1914-ին Կ. Պոլսում, որպէս սեպհականութիւն Ազգային Մատենադարանի: Մի երկրորդ Աւետարան 1200 թուականի գործ, յիշել ենք դարձեալ որպէս սեպհականութիւն Վաշինգտոնի վերեւ յիշուած թանգարանի (եր. 25). այդ Ձեռագիրը նոյնպէս տեսել եւ օգտուել ենք նոյն թուականներին Ազգային Մատենադարանում: Այժմ այդ ՁՁ-ը հասել Ամերիկա, որպէս մասնաւոր սեպհականութիւն. ցանկալի էր, որ անցնէր որ եւ է պետական թանգարանի ձեռք, որպէս զի ապահովուէր նորա պահպանութիւնը եւ մատչելի դառնար արուեստագէտների ուսումնասիրութեան, առանց կտրատուելու եւ մաս մաս ծախելու, որով կորչում է Ձ-ի մեծ արժէքը, մանաւանդ թէ ունի կարեւոր յիշատակարան գրչի, նկարչի, տեղի եւ ժամանակի մասին: